ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐՒՈՅ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՑ ՔԱՂԱՔԻՆ

(Շարունակութիւն)

ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ· ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՑ

Զարթեաւ զատաւորն երկնի, եւ զործեաց ի նմա մե՜ծ արհաւիրս։ Ուղղեցաւ ի քաղաքն պատկեալ, եհար զնա եւ եղծա՜ն զարդք իւր։ Ահա բարկութիւն Տերե ըզքարոզ միջնորդեցաւ։ Եկաց յարարածս, զայս քարոզէ մեզ լռելեայն։ Եկայք լուիցու՜ք զինչ ասէ։ Անարգեցէք ասէ զշինուածս ձեր, շինեցէ՜ք զարեւ մաաց ձերոց։ Բակիչն շինուածոց եհաս, եւ ամենայն ոք շինէ ճեղի։ Ահա ընդոստոյց զաւրս վերջին, զի զազարեցուսցէ ի շինուածոց։ Բակիչն շինուածոց եհա՜ս։ Պահանջիչն մաաց մաւտեա՜լ է։ Զշինուածս շինեալս կործանէ՜։ Զմիտս քակեալս զատի՜։ Շինուածովք, ընդ առա՜ջ լինին քակողին շինուածոց իւրեանց։ Զարթեաւ քակեաց զշինուածս, քանդեա՜ց զքաղաքն թագաւորութեանն։ Եւ ահաւատչեան կործանմանն նորա, թէ հասեա՜լ է ի կործանել զերկիր։ Ոչ եղոյծ զրնաւ արարածս, զի մի՜ եղերեսցեն ընակիչք նորա։ Ընդոստոյց զնոսա յանկարծ, զի եցե՜ն ընդ նոսա պարտիք իւրեանց։ Վերայօրց զանձն իւր ի բամբասանաց, զի ետ մեզ նշա՜ն զալստեան իւրոյ։ Զի աշխատեալք նախ քան զբարկութիւնն, մի՜ աշխատեսցուք յետ բարկութեանն։ Նախ քան զբարկութիւնն խորհեալք, թէ կայցէ եւս տակաւին շինութիւն, զի մի՜ խաբեսցուք։ Առաքեաց զբարկութիւն քարոզիչ առաջի՜։ Քանդեաց զքաղաքս զի մեք լուիցուք, եւ ահա անկեալ եմք յաշխատութիւն չարեաց։ Կործանեաց զշինուածս, զի եւս եթէ ի փլատակս քարանց անկեալ եմք։ Ահա հոգի՜ք խանգարեալ են, եւ ողիւք քարանց զբաւշին։ Ահա նկարք ի վերայ քարանց, եւ յոգիս աղտեղութիւնք։ Անպատուէրք(¹) ահա զործին, եւ պատուիրեալք խափանեա՜լ են։ Կլին մեզք զարարածս, եւ ինքն ի խա՜ղ զբաւսեալ է։ Ահա զբաւշուած եւ նկարք հանդերձ պարտեաւք եւ վիրաւք։ Սիրեցաք եղբարք զամենայն ինչ, եւ զանձի՜նս եւեթ ատեցաք։ Ցածուցէք զյանդգնութիւն մեղաց որ ահա ամբոխի եւ ամբոխէ՜։ Յաճախէ զըղպարտիս, զի զիտէ թէ մե՜րձ է պահանջողն։ Ամբոխէ ի ձեռն շինուածոց, եւ մոլորեցուցանէ՜ ի ձեռն անկոց։ Եկից զմեզ ոխրովք ընչից, եւ խնամո՜վք ամենայն ստացուածոց։ Եթէ զամենայն թողու բարերարն, թերեւս զայս ո՜չ թողու։ Խլեաց զքաղաքս, զի երկիցո՜ւք մեք։ Եւ մեք ո՜չ շարժեցաւ մազ մի ի գլուխ. Զյասումն այնր եհար զնոսա, զարթուցանեմք ի չերկնչելն։ Եթէ եհար զի երկեցուսցէ, եւ յանդգնեցա՜ւ տեսողն եւ ոչ երկեաւ։ Բարբոքի խրատիչ այն, զի ընդ միոյ երկո՜ւս հարցէ զտեսողն։ Նոքա այսպէս ոչ հեռացան, զի ո՜չ տեսին այսպէս յայլմն։ Արդ եթէ եհար ի կորուստ զորս ոչ հեռեցանն իբրեւ զմեզ, երկիցուք, զի զուցէ՜ հարցէ զմեզ և ոչ խնայեսցէ զութ ի յասումն։ Եհար բարձրեալն զտակաւս, զի կեցուսցէ՜ նոքաւք զամենայն աշխարհս։ Եթէ զամենայն արարածս հարեալ էր, ի կորո՜ւստ հասեալ լինէր։ Եւ եթէ անփոյթ արարեալ էր յամենայնէ, յանտեսութի՜ւն մերձեալ լինէր։ Ոչ յաճախեաց եհար, զի երկեցուսցէ՜։ Եւ ոչ անփոյթ արար, զի խասեսցէ։ Եհար զտակաւս, զի նոքաւք չահեսցէ՜ զարարածս։ Եւ զնոսա զորս եհարն, տաւե՜լ քան ըզմեզ չահեցաւ։ Մեզ կա՜մք մեր առնեն աւգուտ, նոցա բնութի՜ւն արար չահ։ Հաճոյք նոցա ատաւելան, տառապինեցա՜ն զի ի գո՜ւր հարան։ Ժպիրհք նոցա ազատեցան, զի եղեւ նոցա մա՜հ սահման։ Որք հարանն քան զմեզ, եղեւ նոցա թողութիւն կարեաւն։ Ոչ մեղանչեն, զի լռեցի՜ն։ Ե-

(¹) Զիր ի բաւզիրս։

digitised by A.R.A.R.@

զեւ նոցա քաւութիւն մահուամբն, ոչ յաւելուն պարաք նոցա, ոչ զրկին տանջանք նոցա։ Թերանայ չափ պարաւց նոցա, զեղո՛ւ մեղայ մերոյ։ Զի ոչ երկեաքն, պակասութիւն է յանդգնեցեալ։ Զի ոչ արբաք գան, գիտայ անմիտ, զի վասն քո պարաւց բիւրք և հազարք կոտորեցան։ Կոտորեալ կոտորուած ի մեղս քո, և ի քէն ո՛չ թափեցաւ զինի։ Եկ ծով եւ ընկղմեաց զքաղաքս, և քո սիրտ ընդ կթա՛ց հոգայ։ Պատատեցան գերեզմանք և վայրեցան մեռեալք, և քո խորհուրդքդ ի հնձանս կան։ Իջին կենդանիք եւ երին մեռեալք(¹), եւ զու տակաւին առ չինուա՛ծս ես։ Եղեն արհաւիրք ի կենդանիս եւ ի մեռեալս, եւ ի քէն ո՛չ թափեցաւ քուն քո։ Երին մեռեալք, եղեն քարոզք, և ո՛չ անկաւ բարբառ ընդ ունկն քո։ Իջին կենդանիք բընակեցին ի դժոխս, եւ զու ճեպեալ զարդարե՛ս զանձնակս։ Լուար զառաջնոցն թէ հարան, ած զմտաւ թէ ընդ վերջինսն հարկանիս։ Լուար եթէ կորեան նոքա, մի՛ կարծեր եթէ զու ապրեսցիս։ Լուար եթէ ահար ատայդն զնոսա, ի վերայ զլխո՛ց քո կայ զաւազանն։ Լուար եթէ Աստուած կոտորեաց զնոսա, ահա սուր իւր առ պարանոցի՛ քում։ Լուար եթէ ատայդն ահար զընոսա, համարեաց եթէ առ քեզ կայ այժմ։ Խորհեաց եթէ ընդէ՛ր ահար զնոսա, եւ տես զի չէ՞ հեսի ի քէն։ Եթէ վասն մեղայ ահար զնոսա, եթէ չիք ի քեզ, անպա՛տ ես։ Լուար եթէ նոքա ոչ ապրեցան, զու զիա՞րդ, ի՛ւ ապրեսցիս։ Եթէ կարծես եթէ նոքա մեղան, ի քեզ մի՛ արատ նոցա։ Ինչ զոր զնոցանէ կարծես, չէ՞ աւրէն եթէ պաշտեսցի ի քեզ։ Զիա՞րդ խորհիս եթէ չոգան, իբրեւ զրարի՞ս եթէ իբրեւ զչարիս։ Եթէ կարծես եթէ իբրեւ զրարիս, իպեա՞ զհերս քո եւ ցել զպատմուճան։ Զի եթէ բարիքն ոչ ապրեցան, չարն ուստի՞ ապրեսցի։ Եւ եթէ իբրեւ զչարս չոգան, մի՞ անաւրիներ, զի մի՞ հարցիս։ Զիարդ եւ խորհիցիս ընդդէմ քո է, փոխանակ քո եթէ կամիս։ Կարծես թէ իբրեւ զրարիս սպառեցան, մի՞ եղիցի քեզ զոր ինչ եպերեան։ Եթէ իբրու չար էին քան զքեզ, ահար զնոսա զի քեզ ցաւեցուցէ՞։ Խորհեա զի նոքա՞ւք ահար զքեզ։ Նոքա հարան, զու պաղատա՞ց։ Եթէ հարցիս, պաղատի՞ս։ Հարար այլեաւք(¹), պաղատեա՞ց։ Տես անմիտ, զի ընդ այնմ որ հարաւն ոչ ահար զքեզ իբրեւ ընկե՛ր նորա ես։ Հարաւ ընկեր քո ընդ իւր եւ ընդ քո, հեծեա՞ զու ընդ քո եւ ընդ նորա։ Ա՛ռ նա զեղծուած մարմնոյ, ա՞ւ զու զչարչարու�մն մրատց։ Երարձ նա զհարուածս միջոյ, բա՞ր զու զպաշխարութիւն միջոյ։ Հարաւ նա իբր զբմաւտաւոր, պաղատեա՞ց զու ի հեռւոյ(²)։ Ապա եթէ նա հարաւ եւ կորեաւ, եւ զու փափկանաս եւ զրզիս, կարծես թէ եպերել է քեզ ատայդն, եթէ ոչ հարկանէ զքեզ։ Նոքա կորեան եւ զու կաս, մրրո՞ բաժին պահեալ ես։ Եհար զնոսա զի խրատեսցէ զքեզ, եւ զու յանձն ապաստա՞ն ես իբրեւ զարդար։ Կորեան նոքա զի զքեզ ատասցի, եւ զու յապահո՞վ ես իբրեւ զհեսի։ Եթէ կարծեսցուք եթէ յոյժ յանցեան, ո՞չ անցանեն ըստ մեզ մեզաւք։ Զար ես զու քան զչարիս նոցա, զի ընդ հարկանել նոցա ո՞չ սոսկացար։ Քնեաց ես զու քան զքնեցեալս նոցա, զի ո՞չ զարթեար ընդ արհաւիրսն որ եղեն։ Զնոցայն եւ զքո պահանջէ ի քէն, զի ահար զնոսա եւ զու ո՞չ երկեար։ Նմա որ հարաւն մեղմանայ(³) զան։ Նա արար իբրեւ զթա՞ծ։ Եհար զնոսա զի զմեզ կեցուսցէ։ Մեք զարձուցաք զաւգուան նորա, զի չահեսցո՞ւք նոքա։ Մեկին մեղք են այնմ որ հարաւն, կրկի՞ն այնմ որ արհամարհեացն(⁴)։ Վարկանի զի(⁵) ահարն զնոսա, յաւելո՞ւ մեզ որոց նեղեցաք։ Քան կրկնէամբ(⁶) նոքաւք զչարիս մեր, ջնջեսցո՞ւք նոքաւք զյանցանս մեր։ Բարկացեալ է որ ահարն զընոսա, զի նոքա հարան եւ մեք ննջե՞մք։ Կամիցաւ զարթուցանել զմեզ չտապաւն, եւ ցասուցանէ՞ զնա քնեցութիւնն մեր։ Արար արհաւիրս զի ընդոստիցուք, եւ բարկացուցանէ՞ զընա ծանր նիրհ մեր։

Տեր Յիսուս ողորմեա Տեառն Ներսիսի առաջնորդի մերոյ եղբայրութեանս, զնոր նոին եւ մեզ զոր նորա մեծանուն Աստուածոյ, եւ այնոցիկ որ յիշեն զնոսա։ Ամեն։

(¹) Օր. վրիպակաւ գրէ՝ մեռելեալք։

(¹) Այսպէս յօրինակին։

(²) Օր. ունէր հեռոյ, յորոյ վերայ ուղղիչն դնէ՝ ։

(³) Օր. ունէր մեղանա, յորոյ վերայ դնէ ուղղիչն՝ մ՝ եւ յ։

(⁴) Օր. ունի՝ արհամարհացն, զոր ուղղիչն ուղղէ յաւելլով ի լուսանցս՝ ատ։

(⁵) Օր. ունի զ, յորոյ վերայ ուղղիչն յաւելու ի։

(⁶) Հաւանական կարծեաք ուղղելի է՝ կրկնէամբ։

digitised by A.R.A.R.@

ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ

Ո՞ կթեսցէ յայսպիսի սղի։ Ո՞ հարցէ հնձան յայսպիսի վշտի։ Ո՞ քակեսցէ յայսպիսի(1) համբաւի։ Ո՞ շինեսցէ յայսպիսի գուժի։ Արդարեւ քարեղէն է ճշմարտիւ։ Որ ընդ այս բեկումն ոչ դղայաւ, երկիւղ զի զուցէ սպասցի ի բարեկամս եւ ի սիրելիս իւր։ Որ ոչ ուսանի սուգ աւտարաւք, ընտանեաւք կարէ ուսանել։ Վշտացուցանէ զնա իւրով ընչիք ստոյգն, զի եղիցի վըշտանա՛լ ընդ վշտացելոյն։ Բաղցեցուցանէ(2) եւ զյագ այն, զի ծանիցէ զկարիս քաղցելոյն։ Փոքր կացուցանէ եւ զմեծացեալն, զի խոնարհեսցի՛ առ խոնարհս։ Ջիջուցանէ զբարձրացեալն, զի զիտասցէ՛ զբխոնարհումն ընկերին։ Վշտացուցանէ եւ զասողջն, զի ծանիցէ զցաւս ընկերին իւրոյ։ Անդոսնէ զհպարտացեալն, զի եղիցի հոգ՛ալ զնեղելոյն։ Ընդոստուցանէ զհանդարտեալն զի մի լիցի հեղգ առ չքաւորն։ Նեղէ ստոյգն զչարահաւանս զի բարեքացուցցէ՛(3) զնոսա բանի։ Սիրէ՛ զայն որ բարեքանայ(4) կամաւ առանց բռնութեան։ Արասցուք զնոսա կամաւք, զիտացուք փոխ հատուցչին։ Մի եկեսցէ բռնութիւն կեղեսցէ զկամս(5) քո իբրեւ զանմտին։ Եկայք տրամեսցուք վասն ընկերաց, զի մի՛ լացցուք զսիրելիս մեր։ Եկայք խափանեսցուք վասն աւտարաց, զի մի՛ խափանեսցուք վասն ընտանեաց։ Բեկցուք վասն կորուսելոյն, զի մի՛ բեկցուք վասն մերոց։ Հառաչեսցուք վասն հեռաւորաց, զի մի՛ ճըչեսցուք վասն մերձաւորաց։ Նեխտ լաց ըզդաւառն կորուսեալ, զի մի՛ լացցես զտուն քո կորուսեալ։ Լուար զաղայոց եթէ կորեան, խափանեա տղաչեա վասն ժառանգաց քոց։ Լուար զծերոց թէ հեղձան, կաց յաղաւթս, զի մեռցի՛ս պատուով։ Լուար զարարոց թէ կորեան, պահեա զի աւրհնեսցի՛ն արմիւք քո։ Լուար զչարժմանէ շինուածոց, հաչեցո՛ զչարժիչն շինուածոց։ Լուար զբարկութենէ թէ զկաւ, հաչեցո՛ զբարձրեալն ստուգութեամբ(1)։ Լուար թէ տապալեցան շինուածք, հատո՛ զվարձ շինուածոց։ Լուար թէ խլեցան գործուածք, մի՛ ազգի առ ձեզ վարձ վարձկանի։ Լուար զանաւրինաց թէ կորեան, տարածեա քեզ խո՛րդ յապաշխարութիւն։ Լուար զարդարո՛ց թէ կորեան, զիտա զի զանա՛լ են առ Աստուած։ Լուար զուրացողաց թէ կորեան, յաճախեսցէ՛ քեզ հաւատ։ Լուար զի չոգան բարիք եւ չարիք, ծանիր զի ի վախճանի որոշին։ Լուար զի եղեւ չփոթումն, ծանիր զի ի վախճանի լինի ընտրոգումն(2)։ Լուար թէ չոգան պիղծ եւ սուրբ, զիտա զի յայտի՛ են ամենագիտին։ Լուար զաղանաց թէ կորեան, զրեա եւ արձակեա՛ զագահութիւն։ Լուար զգանձուց թէ կորեան, թո՛ւք ընդ երեսս մամոնայի։ Լուար զլացողաց թէ կորեան, լեր զլացեալ եւ մի զլացող։ Լուար զվատաց թէ մեռան յանկարծ, ժրացիր յաճախել զպաշարս։ Լուար զվաճառականաց թէ կորեան, սիրեա զհա՛ղ(3) ճշմարտութեան։ Լուար զյարկաց թէ կործանեցան, արի կաց յաղաւթս ընդ յարկովք քով։ Լուար եթէ կորեան ննջեցեալք յանկարծ, կնքեա զանձն քո յանկողնի(4) քում։ Լուար զարհաւրաց, տունջեանց(5), արի կա՛ց յաղաւթս ի գիշերի։ Լուար թէ զոյ հրեշտակ բարկութեան, զրոշմեա՛ զանձն քո լուսաւոր խաչին։ Լուար թէ այրեցին փայլատակունք զմարդիկ, մի՛ վասեր հաւ յ[ը]նկեր քո։ Լուար թէ զայ աւրհաս յանկարծ, մի՛ լինիք կախեալ զյուսոյ։ Լուար թէ զայ մահ յապուրակի, եղիցին ընդ անձի՛ն քում պաշարք քո։ Լուար եթէ կարճեցան աւուրք, մի՛ երկայներ զպարսիս քո։ Լուար թէ կարճեցան ամք, տարածեա զտուրս եւ զաղաւթս։ Լուար թէ առապատ պատրաստեալ է, պատրաստեա՛ հանդերձ հարսանեաց։ Լուար զսուրբ փեսայէն, քարոզեա՛ զչարաթ սրբութեամբ։ Լուար զզուարթնոց թէ սուրբ են, լե՛ր նոցա ընկեր սրբութեամբ քով։

(1) Օր. ունէր յայսպիս, յոր ուղղիչն յաւելու՝ ի։
(2) Օր. ունէր Բաղեցուցանէ, յորոյ վերայ գնէ ուղղիչն՝ ց։
(3) Պակասէ ի բառագիրս։
(4) Այս բառ ևս պակասէ ի բառագիրս։
(5) Օր. գրեալ ունէր զկամ, յոր յաւելու ուղղիչն ս։

(1) Օր. գրէ՝ ստութեամբ, զոր սրբագրիչն ուղղէ յաւելլով ի լուսանցս՝ ուգ։
(2) Նոր բառ, յայտ է թէ իբրեւ pisrnդութիւն։
(3) Ակն յայտնի վրիպակ գրչի. Սաւաղանանց գնէ ի լուսանցս՝ գշան։
(4) Օր. վրիպակաւ գրէ՝ յանկողի։
(5) Այսպէս յորինակին։

digitised by A.R.A.R.@

Զօր եւ տանիլ է պոռնկութիւն, բաւակա՞ն չիցի քեզ ամուսնութիւն։ Յոյժ մեծ է կուսութիւն, փորձեա՛ զայդ քո թէ հանդարտէ նմա։ Անհաղին համբաւս տսուգութեանն, մի՛ հաստանեւր զյոյս քո թէ մեզաւ։ Կակուղ համբաւս սզորմութեանն(1), մի՛ մխիթարել(2) զանձն քո թէ մեղար։ Երկնչիս զու ի դեհենէ, մի՛ լինիր նմա լուցկի։ Ցանկալի է քեզ արքայութիւնն, պընդեա՛ զի եկիցես նմա ժառանգ։ Մի՛ զերիայէ զքեզ լայն ճանապարհն։ Բանդատես զանձն քո եւ զարձի՛ր ի նմանէ։ Լուար թէ նեղ է ճանապարհն, մի՛ փախչիցիր եւ գնար ընդ նա։ Լուար զդրանէն թէ նեղ է, մի՛ տրտմեր եւ մըտանէր ընդ նա։ Սուրն որ անդ կատրեալ, զի զի մա՛ւտ է ամենայն ուրեք։ Լուար զժողովրդենէն(3) Աստուծոյ, լա՛ց զժողովուրդն Աստուծոյ քո։ Մի լար յուսահատութեամբ, իբրեւ այն թէ կորեաւ յաւիտենից։ Ընտրեա քեզ լալումն արօշման, զի լացցե՛ս վասն ժամանակեան մեկնելոցըն։ Մինչ լի են աչք քո արտասուօք, լից զսիրտ քո մխիթարութեամբ։ Զի եղիցի լալ քո վասն վշտացելոյն, եւ մխիթարութիւն քո վասն յարութեա՛նն։ Սուզ ա՛ռ վասն եկեղեցւոյ Քրիստոսի, իբրեւ եկեղեցի ոչ սզոյ ինչ է։ Ահա եւ Տէրն իւր իբրեւ մեռաւ, մա՛ նորա կեանք եղեն ի գժոխս, բայց լացին աշակերտքն լալեն որ նոցա աւգուտ էր։ Եկեղեցի Քրիստոսի բուռն է, եւ քան զմահ ամենեւի՛ն յաղթող։ Զի ոչ յաղթեն նիգք դժոխոց եկեղեցւոյ նորա որպէս ասաց։ Ոչ յաղթելով յաղթէ ի դժոխս կենդանի է անդ իբրեւ զՏէրն իւր։

Հրապարակեաց (Շար.) Յ. Յ. Մ.

(1) Որ. գրէ վրիպանօք՝ ողորմութեանն։

(2) Կարծեմ թէ ընթեռնլի՝ մխիթարեր։

(3) Որ. վրիպակաւ գրէ՝ զժողովրդեենէն։

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԴԷՊՔԵՐԸ

Պաղեստինի մէջ անկարգութիւնը, որ խանգարուած էր Օգոս. 23, Ուր. օր, վերահաստատուած է շնորհիւ Կառավարութեան կողմէ ձեռք առնուած միջոցներուն։ Զինուորական վարչութիւն կը տիրէ ամէն կողմ։

Կառավարութիւնը իր պաշտօնական տեղեկագիրներով (Official Bulletin) կացութիւնը օրը օրին ծանօթացուց հանրութեան։

Խռովութիւնները զսպելու համար թէ՛ ցամաքէն եւ թէ՛ ծովէն զինուորական ուժեր հասան Պաղեստին Օգոս. 26, Բշ. օր։

Հարաւային Գալլէսի սահմանապահ զօրքերէն խումբ մը Եգիպտոսէն հասաւ երկաթուղիով, իսկ Sussex զրահաւորն Եաֆայէն եւ Barham զրահաւորը Հայֆայէն զինուորներ հանեցին ցամաք։

Հետեւեալ թիւերը ցոյց կուտան թէ խռովութիւններ մինչեւ ո՛ւր տարածուած են եւ ո՛րչափ մեռնողներ կամ վիրաւորուողներ են եղած։

Օգոս. 26. Բշ.ի տեղեկագրէն

	Հրեայ		Արաբ
Մեռեալներ			
Երուսաղէմ եւ Քեբրոն	78		26
Եաֆա	4		10
Հայֆա	1		—
	83	+	36=119
Ծանրապէս վիրաւորուած			
Երուսաղէմ եւ Քեբրոն	102		25
Եաֆա	15		18
Հայֆա	50		—
Նապլուս	—		2
Պէյսան	1		—
	168	+	45=213
Թեթեւ վիրաւորուած			
Երուսաղէմ եւ Քեբրոն	66		52
Նապլուս	—		8
Պէյսան	20		—
	86	+	60=146
Համագումար	337	+	141=478

Օգոս. 27. Գշ.ի տեղեկագրէն.

	Իսլամ	Քրիստոնեայ	Հրեայ	Գումար
Սպաննուած	46	4	93	143
Վիրաւորներ (հիւանդանոցի մէջ)	73	12	153	238
Վիրաւորներ (հիւանդանոցէն դուրս.)	45	27	116	188
	164 +	43 +	362 =	569

Ասոնք Երուսաղէմի, Եաֆա—Թէլ Ավիվ եւ Հայֆայի շրջանակին մէջ։

digitised by A.R.A.R.@